է 'ի նկատի ունենալ, որ բաղմաթիւ եղած է՝ մինչև Եկատերինեսլաւի կլիմային վարժելու հայ մեռելոց թիւը։ — Այլ մեք դառնանք 'ի Նախիջևան։

Քաղաքը հեռուէն դիտելով՝ չափաւոր տարածութեամբ քրիստոնեայ քաղաքաց երևոյթ կ'ընծայէ, որոյ հաւաստիք են վեց եկեղեցեաց կաթուղիկէք և զանգակատունք։ Բուսականութեան մասին շատ աղքատ է քաղաքս, որոյ վրայ այժմ նոր կը սկսին խնամք տածելու։ Քաղաքիս ներքին և կամ բարոյական կառավարութիւնքն յուսալիր ապագայ կը խոստանայ հայ սերնդոց, դպրոցաց յաճախութիւնն, որոց վրայ մեծամեծ գումարներ կը ծախեն, պիտի հաւաստեն օր մի գրածս. այժմ ևս մօտ հազարի երկսեռ ուսանողք դպրոցաց, ինչպէս քաղաքին նոյն և եկեղեցեաց կենդանի զարդարանք են, իրենց միաձև զգեստներով։

Այլ ես դեռ փոքրիկ կառքով առաջ կ'երթայի, դէպ իմ ասպնջական մեծարգոյ Եպիփան Պոպպոյեանցի տունը, որ արդէն 'ի վաղուց ինձ ծանօթ էր և բարեկամ։ Պ. Պոպպոյեանցի դունը Ի. Լուսաւորիչ փողոցին վրայ, գեղեցկաչէն տանց մին է, առաջ գնալու միջոցիս աստի և անտի շատ հայերէն բացատրութիւնք յականջս կը հասնէին, որք թէպէտ ինձ համար նոր չէին, վասն զի մեծաւ մասամբ նոյն է Նախիջևանու հայ բարբառը Ղրեմեցւոյն հետ, սակայն և այնպէս այդ հեռաւոր աշխարհին մէջ, և այն 'ի փողոցի, Հայոց լեզուն լսելը ինձ շատ ախորժելի կու գար. ուշադրութեամբ մտիկ կ'անէի՝ որ բառ մի ուշադրութենէս չվրիպի. մին բարձրաձայն կ'ասէր ընկերին. «Հածէ ինա բանը գիտիսու, սախրն չմոռանաս».